ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«27» դեկտեմբերի 2012թ. թիվ 1037-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 05-Ի N 839-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) պարտատոմսերի թողարկման պայմանները, Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 3-ի N 1103-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1580-Ն որոշման հավելված 2-ով հաստատված կարգի 49-րդ կետը և ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի մայիսի 23-ի N 450-Ա որոշմամբ ընդունված <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության բիզնես-գործընթացների կանոնակարգման միջոցառումների ծրագրի>> 1-ին կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 05-ի <<Գանձապետական պահառուի գործունեության կարգը

հաստատելու մասին>> N 839-Ն հրամանի հավելված 1-ով հաստատված կարգում (այսուհետ՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կարգի 3-րդ կետի վերջին նախադասության <<ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 3-ի թիվ 1103-Ն>> բառերը փոխարինել <<ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1580-Ն>> բառերով:

2) Կարգի 5-րդ կետում <<առաջնային տեղաբաշխումներին մասնակցություն>> բառերը փոխարինել <<պարտատոմսերի մանրածախ վաճառքի կազմակերպում>> բառերով:

3) Կարգի 5-րդ կետից հետո լրացնել նոր 5.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<5.1 Գանձապետական պահառուն իր գործունեությունը կարող է իրականացնել էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով, որի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատվող առանձին կարգով:>>:

4) Կարգի 2-րդ, 13-րդ, 19-րդ, 25-րդ կետերում <<ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի>> բառերը փոխարինել <<ՀՀ ֆինանսների>> բառերով:

5) Կարգի 16-րդ կետի <<կնքված պայմանագրի>> բառերը փոխարինել <<2001 թվականի սեպտեմբերի 25-ին կնքված <<Գանձապետական պահառուի ամփոփ դեպո և դրամական հաշիվների սպասարկման մասին>> պայմանագրի>> բառերով:

6) Կարգի 25-րդ կետում <<գանձապետական պահառուի բաժինը>> բառերը փոխարինել <<գանձապետական պահառուի աշխատանքների կազմակերպման բաժինը>> բառերով:

7) Կարգի 27-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

<<• վարում է Գանձապետական պահառուի սպասարկման կետերի դեպո հաշիվները, որոնցում ամփոփ ձևով հաշվառվում են ներդրողների պարտատոմսերը, ինչպես նաև հաշվառում է դեպո հաշիվներն ըստ ներդրողների:>>:

8) Կարգի 29-րդ կետի 6-րդ պարբերությունից հանել <<սոցիալական քարտի համարը>> բառերը:

9) Կարգի 29-րդ կետի 8-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<• Ներդրողի սպասարկումը Գանձապետական պահառուի սպասարկման կետերում իրականացվում է աշխատանքային օրերին ժամը 9.30-ից մինչև 16.00-ը, իսկ էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով՝ շուրջօրյա:>>:

10) Կարգի 30-րդ կետի 1-ին պարբերության առաջին նախադասության <<Գանձապետական պահառուի>> բառերից հետո լրացնել <<սպասարկման կետերի>> բառերը:

11) Կարգի 30-րդ կետի 1-ին պարբերության երկրորդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

<<Էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16.00-ը ներկայացվող հայտերը համարվում են ներկայացված այդ օրը, այդ ժամից հետո՝ հաջորդ աշխատանքային օրը:>>:

12) Կարգի 31-րդ կետի 5-րդ պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Առաջնային տեղաբաշխման կայացումից հետո, ինչպես նաև դեպո հաշվում կատարված այլ փոփոխության դեպքում, ներդրողին իր պահանջով տրամադրվում է դեպո հաշվում հաշվառվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանք (ձև 5):>>:

13) Կարգի 37-րդ կետից հետո լրացնել նոր 38-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<38. Պարտատոմսերի վաճառքն էլեկտրոնային եղանակով՝

- Էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով պարտատոմսեր կարող են ձեռք բերել միայն ֆիզիկական անձինք:
- Ներդրողն էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով պարտատոմսերով գործարքներ կատարելու համար պետք է ունենա <<ԱրՔա>> պրոցեսինգային կենտրոնի միջոցով աշխատող ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերում թողարկված քարտ՝ համապատասխան դրամական միջոցների հասանելի մնացորդով:
- ՀՀ օրենսդրությանը համապատասխան էլեկտրոնային ստորագրության առկայության դեպքում ներդրողը էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով կնքում է <<Պահառության պայմանագիր>>, որում նշվում են պայմանագրի համարը, կնքման ամսաթիվը, հատկացված դեպո հաշվի համարը, ներդրողի և Գանձապետական պահառուի իրավունքները և պարտականությունները, կողմերի պատասխանատվությունը և վեճերի լուծման կարգը, պայմանագրի ժամկետները և դադարման հիմքերը, կողմերի տվյալները՝ Գանձապետական պահառուի գտնվելու վայրը, հեռախոսի համարը, բանկը և բանկային հաշիվը և ներդրողի ռեկվիզիտները՝ անունը, ազգանունը, անձնագրի տվյալները (սերիան,

համարը, երբ է տրվել, ում կողմից է տրվել, ծննդյան ամսաթիվը), մշտական բնակության և/կամ գտնվելու վայրը, հեռախոսի համարը, էլեկտրոնային փոստը, բանկը և բանկային հաշիվը: Էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով պայմանագիր կնքելուց անմիջապես հետո էլեկտրոնային հատուկ համակարգը ներդրողի էլեկտրոնային փոստին ուղարկում է համապատասխան նույնականացման բանալի և գաղտնաբառ:

• ՀՀ օրենսդրությանը համապատասխան էլեկտրոնային ստորագրություն չունենալու դեպքում էլեկտրոնային եղանակով պարտատոմսերով գործարքներ իրականացնելու համար ներդրողը սույն կարգի 29-րդ կետի համաձայն Գանձապետական պահառուի սպասարկման կետում կնքում է <<Պահառության պայմանագիր>> և ներկայացնում է համապատասխան դիմում, որի հիման վրա Գանձապետական պահառուի սպասարկման կետի աշխատակիցն առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի համապատասխան տվյալները մուտքագրում է էլեկտրոնային հատուկ համակարգ, որից անմիջապես հետո էլեկտրոնային հատուկ համակարգը ներդրողի էլեկտրոնային փոստին ուղարկում է համապատասխան նույնականացման բանալի և գաղտնաբառ:

• Նույնականացման բանալին ու գաղտնաբառը օգտագործվում են էլեկտրոնային հատուկ համակարգ մուտք գործելու և պարտատոմսերով գործարքներ իրականացնելու համար:

• Պայմանագրի համաձայն ներդրողի համար բացվում է դեպո հաշիվ, որտեղ հաշվառվում են ներդրողի կողմից ձեռք բերված պարտատոմսերը: Ներդրողը էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով կարող է դիտարկել իր դեպո հաշիվը:

• Կնքված պայմանագրի հիման վրա ներդրողը էլեկտրոնային հատուկ համակարգի միջոցով լրացնում է պարտատոմսերի ձեռք բերման և հետգնման էլեկտրոնային հայտեր, պարտատոմսերի ազատ առաքման հանձնարարականներ: Էլեկտրոնային հատուկ համակարգը համապատասխան հաղորդագրությամբ տեղեկացնում է ներդրողին հայտի բավարարման կամ մերժման մասին: Ներդրողի հայտը բավարարվելու դեպքում ներդրողի էլեկտրոնային փոստին ուղարկվում է պարտատոմսերի ձեռք բերման նպատակով վճարումը հավաստող էլեկտրոնային փաստաթուղթ:

• Առաջնային տեղաբաշխման կայացումից հետո, ինչպես նաև դեպո հաշվում կատարված յուրաքանչյուր շարժից հետո ներդրողի էլեկտրոնային հասցեին ուղարկվում է քաղվածք ներդրողի դեպո հաշվից:

• Ընթացիկ վճարումների, մարված և հետգնված պարտատոմսերի գումարների, ինչպես նաև պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման չկայացման կամ չեղյալ հայտարարվելու դեպքերում դրամական միջոցների վճարումը ներդրողներին կատարվում է փոխանցումով նրանց բանկային հաշիվներին:

• Պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողի կողմից դրամական միջոցների վճարումները կատարվում են <<ԱրՔա>> պրոցեսինգային կենտրոնի կանոնակարգերի համաձայն:>>:

14) Կարգի Ձև 2-ում <<ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության>> բառերը փոխարինել <<ՀՀ ֆինանսների նախարարության>> բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ հրամանի 1-ին կետի 3-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ ենթակետերը՝ 2014 թվականի ապրիլի 1-ից:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ